ՀՏԴ : 929:1(43)Հեգել + 7
DOI https://doi.org/10.52853/25792830-2021.1-48

ՀԵԳԵԼԸ ԱՐՎԵՍՏԻ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ
(նվիրվում է Հեգելի ծննդյան 250-ամյա հոբելյանին)[1]

ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ*

Յուրաքանչյուր դարաշրջանի արվեստ այդ պատմական դարաշրջանի գեղարվեստական պատկերացումների արտացոլումն է, տվյալ հասարակության հոգևոր կյանքի հայելին:
ՀԵԳԵԼ

Հեգելը, մեր ժամանակների բառապաշարով արտահայտված՝ արվեստի ժողովրդայնության ջատագով էր՝ գտնելով, որ «Արվեստը գոյություն ունի ոչ թե փոքր, նեղ շրջանակի, ոչ թե փոքրաթիվ շատ կրթված մարդկանց, այլ ամբողջ ժողովրդի համար՝ ընդհանուր առմամբ»: Արվեստի ստեղծագործություններում, ըստ Հեգելի, ժողովուրդները ներդրել են իրենց ամենաբովանդակալի ու ամենավսեմ ներքին մտահայեցողություններն ու պատկերացումները: Արվեստը հաճախ որպես աղբյուր, իսկ որոշ ժողովուրդների մոտ՝ որպես միակ աղբյուր է ծառայում՝ նրանց իմաստությունն ու կրոնը ճամաչելու համար: Հեգելը նման առաքելություն էր բաժին հանում արվեստին՝ կրոնի և փիլիսոփայության հետ համահավասար: Սակայն արվեստը, ըստ նրա, ունի նաև էական յուրահատկություն, և դա այն է, որ նա նույնիսկ ամենավսեմ առարկաները մարմնավորում է զգայական ձևով՝ դրանք ավելի մերձեցնելով այդ արտահայտման ձևերի էությանն ու բնույթին, զգայություններին և ապրումներին:

Բանալի բառեր – Հեգել, արվեստ, գեղարվեստական իդեալ, գեղեցիկը բնության մեջ, գեղեցիկը արվեստում, բնության ընդօրինակման սկզբունքը:

Ներածություն

Ինքնատիպ ու խորիմաստ են Հեգելի մտքերը արվեստի առաքելության, մարդկության հոգևոր առաջադիմության ասպարեզում նրա բացառիկ

---

[1] Հետազոտությունը կատարվել է հատուկ «Արվեստագիտական հանդեսի» համար՝ գերմանական դասական փիլիսոփայության ամենակարկառուն ներկայացուցչի՝ Գեորգ Վիլհելմ Ֆրիդրիխ Հեգելի, ծննդյան 250-ամյա հոբելյանի կապակցությամբ, որը լրացավ 2020թ. օգոստոսի 27-ին:

* Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի խորհրդական, Հյուսիսային համալսարանի գիտական կենտրոնի ղեկավար, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, egorovicgrigorij@gmail.com, հոդվածի ներկայացման օրը՝ 10.03.2021, գրախոսման օրը՝ 26.04.2021, տպագրության ընդունման օրը՝ 05.05.2021:

դերի մասին: Արվեստը, ըստ Հեգելի, այն միակ միջոցն է, որի օգնությամբ աբստրակտ, իր մեջ անորոշ, բնական ու հոգևոր տարրերից անկանոն կերպով միահյուսված բովանդակությունը կարող է բարձրանալ մինչև գիտակցությունը:

Համեմատական վերլուծության ենթարկելով արվեստի և կրոնի անցած պատմական ուղին՝ Հեգելը բարձր է գնահատում մարդկության հոգևոր առաջադիմության գործում արվեստի բացառիկ առաքելությունը և նրա խաղացած անկրկնելի դերը: «... պատմության թատերաբեմում արվեստի երևան գալը,- գրում է նա,- իրենով նշանավորում է կրոնի կործանումը, որը դեռևս գամված է զգայական արտաքինին»[2]:

Գեղարվեստական իդեալի հեգելյան ըմբռնումը

Քննության առնելով գեղագիտության պրոբլեմները՝ Հեգելն արվեստի բովանդակությունը համարում է գաղափարը, իսկ նրա ձևը՝ զգայական պատկերը: Ընդ որում, գեղեցիկը արվեստի մեջ սոսկ տրամաբանական գաղափար չէ, այլ այնպիսի գաղափար, որը ձևավորվել է իրականության մեջ և վերջինիս հետ կազմում է անմիջական միասնություն:

Այս համատեքստում Հեգելը հատուկ տեղ է հատկացնում իր գեղագիտական ուսմունքի կարևոր կատեգորիաներից մեկի՝ գեղարվեստական իդեալի վերլուծությանը: Իդեալը, ըստ Հեգելի, ոչ այլ ինչ է, եթե ոչ արվեստի իրականությունը, նրա իրագործումը, որը ձևավորվել է հասկացությանը համապատասխան: Այդ պատճառով արվեստի փիլիսոփայության բովանդակությունը հանդիսանում է իդեալի և նրա զարգացման մասին ուսմունքը: Իդեալի զարգացման աստիճանները Հեգելն անվանում է արվեստի ձևեր, որոնք շերտավորվում են ըստ իդեալի և արտաքին կերպարի միջև տարբեր փոխհարաբերության սկզբունքի: Երբ արտաքին կերպարն իրենից ներկայացնում է սոսկ գաղափարի ակնարկ, այդ դեպքում մենք գործ ունենք սիմվոլիկ արվեստի հետ, որը բնորոշ է Հին Արևելքին: Դասական ձևում, ինչպիսին է անտիկ արվեստը, գաղափարը և նրա արտաքին կերպարը գտնվում են լիակատար համապատասխանության մեջ: Ռոմանտիկական արվեստում, որն ընդգրկում է միջնադարյան և Հեգելի ժամանակակից արվեստը, արտաքին կերպարն արդեն բավարար չէ զարգացող, բնությանը հաղթած գաղափարի մարմնավորման համար:

Տարողունակ ու խորիմաստ է Հեգելի արտահայտած այն միտքը, ըստ որի՝ «Արվեստի նկատմամբ համընդհանուր պահանջմունքը բխում է մարդու բանական ձգտումից՝ հոգեկանորեն յուրացնել ներքին ու արտաքին աշխարհը՝ այն պատկերացնելով որպես առարկա, որի մեջ նա ճանաչում է իր սեփական «ես»-ը»[3]:

«Արվեստի իսկական խնդիրը,- գրում է Հեգելը,- հանդիսանում է ոգու բարձրագույն ձգտումների ըմբռնումը: Դրանից իսկույն հետևում է, որ որքանով խոսքը **բովանդակության** մասին է, գեղարվեստական ստեղծագոր-

[2] **Гегель.** Философия духа, М., 2017, стр. 137.

[3] **Гегель Георг Вильгельм Фридрих**. Введение в историю философии. Лекции по эстетике. Наука логики. Философия природы, М., 2019, стр. 557.

ծությունը չի կարող տրվել անզուսպ ֆանտազիայի. այդ հոգևոր ձգտումները որոշակի հենման կետեր են սահմանում արվեստի ստեղծագործության բովանդակության համար՝ որքան էլ բազմապիսի և անսպառ լինեն նրա ձևերն ու պատկերները»[4]:

Ինչ վերաբերում է գեղարվեստական ստեղծագործության բուն ձևերին, ապա դրանք նույնպես մատնված չեն լիակատար կամայականության: Ոչ ամեն մի ձևագոյացում է ընդունակ արտահայտել ու մարմնավորել մարդկային ոգու պահանջմունքները, դրանք ընդունել իր մեջ և փոխանցել դրանք, սակայն այս կամ այն որոշակի բովանդակությունը որոշում է նաև դրա արտահայտման համապատասխան ձևը[5]:

Արվեստի տարբեր ձևերի հետ է կապված առանձին արվեստների համակարգը. ճարտարապետությունը պատկանում է սիմվոլիստական արվեստին, քանդակագործությունը՝ դասական արվեստին, գեղանկարչությունը, երաժշտությունը և պոեզիան՝ ռոմանտիկական արվեստին:

Որպես արվեստում իդեալականացման սկզբունքի համոզված տեսաբան՝ Հեգելը հանդես է գալիս ակադեմիական էսթետիկայի ներկայացուցիչների կողմից այդ սկզբունքի աղավաղման ու գռեհկացման փորձերի դեմ: Նա ցավով ու ափսոսանքով նշում է, որ այդ գործիչները, ձգտելով իդեալական արտացոլման, որի միջոցով նրանք փորձում էին պատկերել գեղեցիկը, իրականում «հայտնվեցին անճաշակության, անկենդանության մեջ և կամազրկության մակերեսին»[6]:

Հեգելն ընդվզում էր իդեալի աբստրակտ ըմբռնման, այդ հարցում կլասիցիզմի կույր հետևորդների դեմ, գտնելով, որ իսկական արվեստն այն արվեստն է, որի գլխավոր նպատակը իդեալի բացահայտումն է: Ընդ որում իդեալը Հեգելի համար գոյություն ունի ամենից առաջ որպես գեղարվեստական ընդհանրացում, տիպ, որը մարմնավորված է կենդանի անհատականության մեջ: «Իդեալը,- գրում է նա,- իրենից ներկայացնում է եզակիություններից և պատահականություններից առանձնացված իրականություն, քանի որ ներքին էությունն այդ արտաքին գոյության մեջ դրևորվում է որպես կենդանի իրականություն»[7]:

Միաժամանակ իդեալն իրեն դրսևորում է որպես իրականության նկատմամբ դրական վերաբերմունքի արտահայտություն, որպես իրականության էական, գլխավոր միտումների նկատմամբ ստեղծագործական խանդավառության հաստատում: Իդեալը ներկայանում է որպես ժամանակի պոզիտիվ ուժի դրսևորում, որպես կոնկրետ պատմական նշանակալի բովանդակության արտահայտություն, որն իր մեջ է ներառում հասարակության ամենաբարձր քաղաքացիական, քաղաքական, բարոյական շահերը: Արվեստի խնդիրն է՝ առարկաներն ու երևույթները ճանաչել իրենց համընդհանրության մեջ՝ դրանց արտաքին դրսևորման մեջ մի կողմ թողնելով այն ամենը,

---

[4] Նույն տեղում, էջ 163:

[5] Տե՛ս նույն տեղում:

[6] **Гегель Г.В.Ф.** Эстетика, в 4-х томах, М., 1968, т. 1, стр. 170.

[7] Նույն տեղում, էջ 165:

ինչը բովանդակության մատուցման առումով ոչ էական է, մակերեսային, ոչ կարևոր:

Մյուս կողմից՝ իրականության գեղարվեստական արտացոլումը, իդեալի մարմնավորումը, ըստ Հեգելի, ամենևին չի նշանակում նահանջ իրականությունից, նրա գոյության անտեսում: Ընդհակառակն, այն հանդիսանում է իրականության խոր, ընդհանրացված, իմաստավորված արտացոլում, քանզի իդեալը հանդես է գալիս իբրև այնպիսի ֆենոմեն, որը խոր ու կենարար արմատներ ունի իրականության մեջ: Իդեալի ուժն ու կենսունակությունը հենց այն է, որ հոգևոր հիմնական իմաստը, որ նա կոչված է արտահայտելու, խորապես թափանցում է պատկերվող առարկայի էության մեջ:

Էականի, տիպականի պատկերումը, հոգևոր իմաստի մարմնավորումը, իրականության զարգացման առավել կարևոր ու բնորոշ միտումների արտացոլումն էլ հենց, ըստ Հեգելի, հանդիսանում է իդեալի բացահայտումը: Հենց այդտեղ է, որ իդեալը համընկնում է արվեստում ճշմարտության, գեղարվեստական ճշմարտության հետ:

Էսթետիկական իդեալի հասկացության հետ Հեգելը սերտորեն կապում է գեղեցիկը որպես գեղագիտության կենտրոնական կատեգորիա, որը բնութագրում է այն երևույթները, որոնք օժտված են բարձրագույն գեղարվեստական արժեքով:

Անհրաժեշտ ենք համարում մատնանշել, որ Հեգելի էսթետիկական ուսմունքը, ինչպես, ի դեպ, մի առիթով խոստովանում է նաև ինքը՝ հեղինակը, գեղարվեստական ստեղծագործությանը նպաստելու խնդիր չի հետապնդում, այլ սոսկ ձգտում է ճանաչել էսթետիկականի բնույթը կամ որ միևնույնն է՝ ճանաչել արվեստի էությունը:

Արվեստին, ըստ Հեգելի, կարելի է, իհարկե, մոտենալ որպես հետաքրքիր ու հաճելի ժամանցի, մեր առօրյա միջավայրը ավելի գեղեցիկ ու հրապուրիչ դարձնելու միջոցի: Սակայն նման դեպքում այն կլիներ ոչ թե ազատ ու անկաշկանդ գործունեություն, այլ օժանդակ, սպասարկու և ստորադաս զբաղմունք: Մինչդեռ արվեստը միայն այն ժամանակ է ծառայում իր բարձրագույն կոչմանը, երբ նա կրոնի և փիլիսոփայության հետ կանգնում է միևնույն շարքում և դառնում է «... մարդկային խորագույն պահանջմունքների, ոգու անընդգրկելի ճշմարտությունների»[8] իմացության միջոցներից մեկը:

Արվեստի ստեղծագործությունների և առհասարակ արվեստում վեհ գաղափարների, աստվածային բովանդակության բացառիկ նշանակության ընդգծմանն ենք հանդիպում «Ոգու փիլիսոփայության» «Արվեստ» բաժնի եզրափակիչ մասում, որտեղ Հեգելը գրում է. «Արվեստագետի և հանդիսատեսի հանճարը՝ իրենց իսկական նշանակությամբ և զգայությամբ միախառնվում են այն վեհ աստվածայնության հետ, որի դրսևորումը ձեռք է բերվում արվեստի ստեղծագործության մեջ, դրանում գտնում է բավականություն և ազատագրում. ազատ ոգու հայեցողությունն ու գիտակցությունը արտահայտված և ձեռք են բերված»[9]:

---

[8] Նույն տեղում, էջ 13:

[9] **Гегель**. Философия духа, стр. 137.

Արվեստը և գեղեցիկը, ըստ Հեգելի, որպես բարի հանճար, իրենց զգացնել են տալիս մարդու բոլոր կենսական ձեռնարկումներում: Զարդարելով մարդու արտաքին ու ներքին աշխարհը՝ նրանք մեր կենսական միջավայրին հաղորդում են վառ ու բերկրալի բնույթ: Արվեստը ցրում է մեր պարապ ժամերի ձանձրույթը, և նույնիսկ այնտեղ, որտեղ չի կարող լինել ոչ մի լավ բան, արվեստը ծայրահեղ դեպքում գրավում է չարիքի տեղը, իսկ դա արդեն ավելի լավ է, քան չարիքը[10]:

Հեգելը ելնելով իր փիլիսոփայական ուսմունքում ներմուծած այն ընդհանուր նախադրյալից, որ միայն անմիջական զգայության և արտաքին աշխարհի առարկաների այն կողմում մենք կարող ենք գտնել իսկական իրականությունը, քանզի իրոք իրական է հանդիսանում միայն «իր մեջ և իր համար կեցությունը», բնության և ոգու սուբստանցիոնալ սկզբունքը՝ այն համոզմունքն է հայտնում, որ համընդհանուր ուժերի գերիշխանությունն էլ հենց դրսևորվում ու բացահայտվում է արվեստի միջոցով: «**Արվեստը**,- գրում է նա,- **երևույթների ճշմարիտ բովանդակությունն ազատում է պատրանքից ու խաբկանքից**, որոնք հատուկ են այս հոռի, անցողիկ աշխարհին, և նրան հաղորդում է բարձրագույն՝ ոգու կողմից ծնունդ առած իրականություն»[11]:

Արվեստի խնդիրն այն է, որպեսզի նա իրականության առարկաներն ու երևույթները ճանաչի և արտացոլի դրանց համընդհանուր կապի մեջ՝ դրանց արտաքին դրսևորման մեջ անտեսելով այն ամենը, ինչ բովանդակության արտահայտման առումով ոչ էական է:

Արվեստի բոլոր տեսակները, ըստ Հեգելի, աշխարհի իրենց պատկերման մեջ կոչված են առանձնացնելու էականը, բնորոշը, և արտացոլման համար էական այդ հանգամանքները կրում են իդեալական, հոգևոր բնույթ և ոչ թե հանդիսանում են իրականության մեջ գոյություն ունեցող ինչ-որ բան: Եթե արվեստագետը սկսեր պարզապես շարադրել մի ինչ-որ դեպքի իրական մանրամասները, ապա նա այդ պատկերը կդարձներ խամրած, անճաշակ, ձանձրալի և անտանելի[12]:

Սակայն արվեստը, ըստ Հեգելի, իր մեծ ու անվիճելի առավելություններով հանդերձ՝ իր մեջ ներառում է նաև որոշ բովանդակային թերարժեք կողմեր, որոնք իրենց կնիքն են դնում նաև նրա ձևի վրա: Արվեստի բովանդակությունն անբավարար է նաև այն պատճառով, որ նրան ոչ միշտ է հաջողվում իր արտահայտման համար գտնել իմանենտ ձև[13]:

Այնուհետև՝ պատկերն իր վրա կրում է ինչ-որ անճաշակության և աննշանչվածության գծեր, քանզի ինքը՝ ներքինն այստեղ տառապում է հոգեկանության բացակայությամբ և այդ պատճառով օժտված չէ արտաքինի մեջ ազատորեն ներթափանցելու կարողությամբ՝ նրան տալու համար իմաստ և ձևավորվածություն: Գեղեցիկ արվեստը, ընդհակառակն, պայմանավորվում է ազատ ոգու ինքնագիտակցությամբ և դրանով իսկ զգայականի և ընդհան-

---

[10] Տե՛ս **Гегель Георг Вильгельм Фридрих.** Введение в историю философии. Лекции по эстетике. Наука логики. Философия природы, էջ 149:

[11] Տե՛ս նույն տեղում, էջ 156:

[12] Տե՛ս **Гегель Г.В.Ф.** Эстетика, в 4-х томах, т. 1, էջ 176:

[13] Տե՛ս **Гегель.** Философия духа, էջ 137:

ռապես այն ամենի ոչ ինքնուրույնության գիտակցությամբ, ինչը ոգու համեմատությամբ միայն բնական է. այդ արվեստը ամբողջ զգայականը դարձնում է բացառապես ոգու դրսևորում, ներքին ձևն այստեղ այն է, ինչը միայն ինքն իրեն է արտահայտում[14]:

Հեգելը հանդես է գալիս ընդդեմ նրանց, ովքեր ելնում են այն բանի անհրաժեշտությունից, որ մարդը պետք է մնա բնության հետ անմիջական միասնության մեջ: Նա գտնում է, որ «... նման միասնությունը իր աբստրակտության մեջ հանդիսանում է կոպտություն ու վայրենություն, և խախտելով այդ միասնությունը՝ արվեստն իր նուրբ ձեռքերով ազատում է մարդուն բնական կախվածությունից՝ մարդուն բարձրացնելով վերջինից վեր»[15]:

Հեգելը խստագույն քննադատության է ենթարկում ու մերժում նաև մեկ ուրիշ տարածված տեսակետ, որը նեղացնում է արվեստի դերը և նրա նպատակը հանգեցնում տենչանքի զգացման մեղմացմանը, կրքերի մաքրագործմանը, խրատականությանը և բարոյական կատարելագործմանը:

Վերը նշված և նման այլ մոտեցումներին Հեգելը հակադրում է իր սեփական տեսակետը, իր գեղարվեստական կրեդոն. «Ի հակադրություն դրա՝ մենք պնդում ենք,- գրում է նա,- որ արվեստը կոչված է բացահայտելու **ճշմարտությունը** զգայական ձևով, ... և որ արվեստի վերջնական նպատակը գտնվում է բուն արվեստի մեջ... Քանզի մյուս նպատակները, ինչպես, օրինակ, խրատականությունը, մաքրագործումը, ուղղումը, փող վաստակելը, փառքի ու մեծարվելու ձգտումը ոչ մի առնչություն չունեն գեղարվեստական ստեղծագործության հետ որպես այդպիսին և չեն բնորոշում նրա հասկացությունները»[16]:

Իսկական արվեստը, ըստ Հեգելի, կոչված է արտացոլելու հասարակական կյանքի առավել մեծ ու նշանակալի երևույթները. նեղ, մանր թեմաները չեն կարող դառնալ գեղարվեստական գործունեության առարկա:

Հեգելը՝ բնության ընդօրինակման սկզբունքի մասին

Արվեստի բուն էությունը և նպատակը ճշմարտապես ըմբռնելու առումով, ըստ Հեգելի, խիստ կարևոր է պարզել, թե ի՞նչ շահ է հետապնդում արվեստագետը, ի՞նչ **նպատակ** է նա դնում իր առջև արվեստի այս կամ այն ստեղծագործությունը կերտելիս: Այս համատեքստում Հեգելն ամենից առաջ քննական վերլուծության է ենթարկում ու մերժում այսպես կոչված **բնության ընդօրինակման սկզբունքը**, այն տեսակետը, ըստ որի արվեստի գլխավոր նպատակը հանդիսանում է նմանակումը, որի տակ հասկանում են բնության պատկերների ադեկվատ պատճենավորման կարողությունը այն տեսքով, ինչ տեսքով դրանք գոյություն ունեն[17]: Նմանակումը իսկական իմաստով արվեստ չէ, գտնում է Հեգելը. ավելին՝ «սոսկ նմանակման դեպքում արվեստը չի

---

[14] Տե՛ս նույն տեղում, էջ 137:

[15] **Гегель Георг Вильгельм Фридрих.** Введение в историю философии. Лекции по эстетике. Наука логики. Философия природы, стр. 213.

[16] Նույն տեղում, էջ 221:

[17] Տե՛ս **Гегель Г.В.Ф.** Эстетика, в 4-х томах, т. 1, էջ 48:

կարող մրցել բնության հետ և նմանվում է թրթուռին, որն ուզում է հասնել փղին»[18]:

Նմանակման սկզբունքն, ըստ Հեգելի, ֆորմալ և ոչ ստեղծագործական սկզբունք է: Նմանակմամբ թեև կարելի է ստեղծել հմտորեն պատրաստված իրեր, սակայն ոչ երբեք արվեստի ստեղծագործություններ: Մյուս կողմից՝ այդպիսի գեղարվեստական ստեղծագործությունը հետ է մնում բնության գեղեցիկից, քանզի արվեստի գեղարվեստական միջոցները սահմանափակ են, և արվեստը կարող է ստեղծել սոսկ իրականության խաբուսիկ պատրանք և այն էլ միայն՝ արտաքին զգայության համար: Ուստի արվեստը, եթե այն սահմանափակվում է միայն ընդօրինակման ֆորմալ նպատակով, լիարժեք կյանքի փոխարեն մատուցում է միայն արտաքին ձև[19]:

Բնական օրիգինալի նկատմամբ նրա պատճենի մշտական անհաջողության ու ոչ լիարժեքության պայմաններում արվեստի նպատակը մնում է սոսկ այն բավականությունը, որ նա ստանում է բնության ստեղծագործությանը նմանվող ինչ-որ բան ստեղծելու բուն կարողությունից: Այս առիթով Հեգելը դիմում է Կանտի վկայակոչած այն հայտնի օրինակին, թե ինչպես է մեզ շատ արագ ձանձրացնում այն մարդը, ով կատարելապես տիրապետելով սոխակի երգելու ձևին, փորձում է այն ներկայացնել որպես արվեստի նմուշ: Սակայն դա, ըստ Հեգելի, իրականում շատ հեռու է արվեստ լինելուց, որովհետև «... դրանում մենք չենք տեսնում ո՛չ բնության ազատ ստեղծագործություն, ո՛չ գեղարվեստական ստեղծագործություն, ընդհանրապես ոչինչ՝ բացի աճպարարությունից»: Մինչդեռ մարդու ազատ ու արգասավոր ընդունակությունից մենք ակնկալում ենք բոլորովին ուրիշ բան, այլ ոչ թե այնպիսի երաժշտություն, որը սոխակի երգի նման, դուրս է նետվում մարդկային կոկորդից, և այդ իր յուրահատուկ կենսունակությամբ նմանվում է այն հնչյուններին, որոնք արտահայտում են մարդկային զգացմունքներ[20]:

Եվ ընդհանրապես, այն ուրախությունը, որ մեզ պատճառում է նմանակման հարցում դրսևորվող ճարպկությունը, չի կարող էական լինել, և մարդուն ավելի վայել է ուրախանալ նրանով, ինչ նա ծնում է ինքն իրենից, իր զգացմունքային աշխարհից: Ավելին՝ նմանակման ամեն մի աբստրակտ մրցություն, ըստ Հեգելի, կարելի է համեմատել, օրինակ, այն մարդու ձեռնածության հետ, ով սովորել է ոսպի հատիկները անվրեպ կերպով գցել-անցկացնել նեղ անցքի միջով: Իր այդ վարպետությունը ինքնագոհ կերպով ներկայացնելով Ալեքսանդր Մակեդոնացուն՝ աճպարարը նրանից իր վարպետությանն արժանի պարգև էր ակնկալում: Սակայն Ալեքսանդրը նման անօգուտ ու անբովանդակ արվեստի համար նրան որպես պարգև ընծայեց ընդամենը ... ոսպի չորս հատիկ[21]:

Արվեստի բուն առարկայի, բնության և արվեստի գեղեցիկի հե-

[18] Նույն տեղում, էջ 49:
[19] Տե՛ս **Гегель Георг Вильгельм Фридрих.** էջ 204:
[20] Տե՛ս նույն տեղում, էջ 205:
[21] Տե՛ս նույն տեղում, էջ 205-206:

գելյան ըմբռնումը

Ինքնատիպ է արվեստի բուն առարկայի, բնության և արվեստի գեղեցիկի հեգելյան ըմբռնումը: Արվեստի գլխավոր առարկան գեղեցիկն է, սակայն ոչ ամեն մի գեղեցիկ: Բնության գեղեցիկը, ըստ Հեգելի, չի կարող դառնալ արվեստի առարկա, քանզի որպես արվեստի իսկական առարկա կարող է ծառայել միայն այն, ինչ հանդիսանում է մարդկային ոգու արգասիք: Այդ պատճառով նա գեղեցիկի ոլորտը սահմանափակում է արվեստի ստեղծագործություններով՝ բնության գեղեցիկը դուրս թողնելով էսթետիկական պատկերացումների շրջանակից: Ուստի պատահական չէ, որ Հեգելի «Էսթետիկան» իր ամբողջության մեջ նվիրված է արվեստի գեղեցիկի վերլուծությանը, և բնության գեղեցիկի հարցը նրանում, ըստ էության, շրջանցվում է:

Բնության գեղեցիկի և արվեստի գեղեցիկի փոխհարաբերության հարցին նա առավել հանգամանորեն անդրադարձել է «Դասախոսություններ արվեստի մասին» աշխատության առաջին՝ «Գեղեցիկը բնության մեջ և գեղեցիկը արվեստում» բաժնում: Շարադրանքի հենց սկզբից նա իր առջև նպատակ է դնում հիմնավորել այն միտքը, թե ինչու է բնության գեղեցիկի հարցի քննությունը գիտակցաբար դուրս թողնում իր ուսումնասիրության ոլորտից՝ իր էսթետիկական հետազոտություններում ներառելով միայն արվեստի գեղեցիկը: Առօրյա կյանքում, - գրում է նա,- մարդիկ սովոր են խոսել **գեղեցիկ** գույնի, **գեղեցիկ** երկնքի, **գեղեցիկ** գետի, **գեղեցիկ** վարդերի, **գեղեցիկ** կենդանիների և ավելի հաճախ՝ **գեղեցիկ** մարդկանց մասին: Տվյալ պարագայում տեղին չհամարելով խորանալ այն վեճերի մեջ, թե որքանով է պատշաճ նման առարկաներին վերագրել գեղեցիկի հատկանիշներ և դրանով իսկ բնության գեղեցիկին տեղ տալ արվեստի գեղեցիկի կողքին՝ Հեգելն առաջադրում է իր սկզբունքային ու հիմնարար թեզը՝ արվեստի գեղեցիկը բարձր է բնության գեղեցիկից[22]: Եվ դա ամենից առաջ այն պատճառով, որ արվեստի գեղեցիկը հանդիսանում է այնպիսի գեղեցիկ, որը ծնվում ու վերածնվում է ոգու հիմքի վրա, և քանի որ ոգին ու նրա ստեղծագործությունները բարձր են բնությունից ու նրա երևույթներից, ուստի արվեստի գեղեցիկն էլ բարձր է բնական գեղեցկությունից: Ավելին՝ ըստ Հեգելի, նույնիսկ մարդու գլխում ծագող ամեն մի թեկուզ խղճուկ հնարանք բարձր է բնության ցանկացած ստեղծագործությունից, քանզի ամեն մի ֆանտազիայի մեջ այնուամենայնիվ առկա է մի ինչ-որ հոգևոր բան, առկա է ազատությունը[23]:

Այս կամ այն առարկան, ըստ Հեգելի, արվեստի ստեղծագործություն կարող է հանդիսանալ սոսկ այն չափով, ինչ չափով նա ծնունդ է առել մարդկային ոգուց և պատկանում է նրան, ստացել է նրա մկրտությունը և պատկերում է սոսկ այն, ինչ համահունչ է ոգուն: Մարդկային շահերը, հոգևոր արժեքը, որով օժտված է այս կամ այն իրադարձությունը, անհատական բնավորությունը, արարքը՝ իր հանկարծական փոփոխությունների ու ավարտի մեջ՝ գեղարվեստական ստեղծագործության մեջ պատկերվում ու առանձնացվում են ավելի մաքուր ու թափանցիկ, քան դա հնարավոր է առօրյա ոչ գեղար-

[22] Տե՛ս նույն տեղում, էջ 146:
[23] Տե՛ս նույն տեղում:

վեստական իրականության մեջ: Դրա շնորհիվ արվեստի ստեղծագործությունը բարձր է կանգնած բնության ցանկացած առարկայից, որն իր վրա չի կրել ոգու վերափոխիչ ուժը[24]:

Հոգևորը բարձր է բնության ցանկացած առարկայից, քանզի «...բնության ստեղծած ոչ մի բան չի պատկերում աստվածային իդեալներն այնպես, ինչպես դա անում է արվեստը»[25]: Այն ամենին, ինչ ոգին հանում է իր ընդերքից և ներդնում է արվեստի ստեղծագործության մեջ, ոգին դրան հաղորդում է տևական շարունակականություն՝ նույնիսկ գոյության տեսանկյունից: Բնության առանձին կենդանի արդյունքները անցողիկ են, դրանց արտաքին տեսքը փոփոխական է, մինչդեռ արվեստի ստեղծագործությունը կայուն կերպով պահպանվում է, թեև ոչ թե նրա գոյության տևողությունը, այլ նրա մեջ վառ արտահայտված հոգևոր կյանքի պարզորոշությունն է հանդիսանում արվեստի ստեղծագործության իսկական առավելությունը բնական իրականության նկատմամբ: Գիտական վեճի մեջ մտնելով իր ընդդիմախոսների հետ, Հեգելը գրում է. «...Աստված փառաբանվում է առավելապես նրանով, ինչ արարում է ոգին, քան թե բնության առարկաներով և ստեղծագործություններով: Քանզի աստվածային սկզբունքը ոչ միայն գոյություն ունի մարդու մեջ, այլև նրա մեջ այն գործում է մեկ ուրիշ՝ Աստծո էությանն ավելի համապատասխան ձևով, քան բնության մեջ»[26]: Իր ընդհանուր իդեալիստական կոնցեպցիային հավատարիմ՝ Հեգելը գտնում է, որ Աստված ոգի է, և այն միջավայրը, որի միջով անցնում է աստվածայինը, միայն մարդու մեջ է կրում գիտակից, եռանդով ինքն իրեն ծնունդ տվող ոգու ձև: Մինչդեռ բնության մեջ այդպիսի միջավայր է հանդիսանում անգիտակցականը, զգայականը և արտաքինը, որն իր արժեքով չափազանց շատ է զիջում գիտակցությանը: Թեև գեղարվեստական ստեղծագործության մեջ Աստված նույնպես գործունյա ուժ է, ինչպես որ բնության երևույթներում, սակայն արվեստի ստեղծագործություններում աստվածայինը, լինելով ոգու ծնունդ, իր գոյության համար ձեռք է բերում նրա բնույթին համապատասխանող արտահայտման ձև, ինչպիսին չի հանդիսանում նրա գոյությունը բնության անգիտակից զգայականության մեջ[27]:

Մատնանշված հանգամանքների ուժով՝ բնության գեղեցիկը չի կարող դառնալ գեղագիտական հետազոտությունների առարկա, թեև նրա աղբյուրը նույնպես, ըստ Հեգելի, բացարձակ ոգին է: Դա է նաև այն բանի պատճառը, որ Հեգելն իր գլխավոր ուշադրությունը սևեռում է արվեստի պրոբլեմների քննությանը՝ գտնելով, որ էսթետիկան զուտ արվեստի փիլիսոփայություն է:

Մեկ ուրիշ տեսանկյունից անդրադառնալով գեղարվեստական ստեղծագործության՝ որպես մարդկային գործունեության արդյունքի և բնության գեղեցիկի փոխհարաբերության հարցին, նա հանդես է գալիս այդ հարցի պարզունակ ըմբռնման և գռեհկացման փորձերի դեմ: Առօրյա գիտակցությունը,- գրում է նա,- հեշտությամբ հանգել է այն մտքին, որ մարդկային ար-

[24] Տե՛ս նույն տեղում, էջ 186:
[25] Նույն տեղում:
[26] Նույն տեղում, էջ 187:
[27] Նույն տեղում:

վեստի ստեղծագործությունը, իբր, ցածր է կանգնած բնության առարկայից, որ, իբր, գեղարվեստական ստեղծագործությունը իր մեջ օժտված չէ զգայությամբ և չի հանդիսանում կենդանի էակ. դիտվելով որպես արտաքին օբյեկտ՝ այն մեռյալ է: Իսկ կենդանությունը մենք սովորաբար բարձր ենք դասում մեռյալից:

Որ գեղարվեստական ստեղծագործությունը ներքուստ օժտված չէ շարժմամբ ու կյանքով, դրա հետ չի կարելի չհամաձայնել: Բնության կենդանի արդյունքները ինչպես ներքուստ, այնպես էլ արտաքուստ իրենցից ներկայացնում են նպատակահարմար կերպով կառուցված օրգանիզմներ, մինչդեռ արվեստի ստեղծագործությունները կյանքի տեսանելության են հասնում միայն իրենց մակերեսին, իսկ ներքուստ հանդիսանում են քար, փայտ, կտավ կամ, ինչպես պոեզիայում է, պատկերացում, որը դրսևորվում է խոսքի և տառերի մեջ[28]:

Պաշտպանելով իր տեսակետը, Հեգելը հանդես է գալիս այն գեղագետների և արվեստի գործիչների դեմ, ովքեր փորձում էին բնության գեղեցիկը ավելի կատարյալ համարել և վեր դասել արվեստի գեղեցիկից: Այդ առիթով նա վերլուծության է ենթարկում գեղարվեստական ստեղծագործության բնույթի և մարդու ներաշխարհի վրա նրա ներգործության հարցը և նշում, որ գեղարվեստական ստեղծագործությունն ուղղված է զգայական ընկալմանը և որ այն, մեզ շրջապատող արտաքին բնության կամ մեր սեփական ապրումներով ու զգացմունքներով տոգորված էության նման, տրված է արտաքին կամ ներքին զգայական ապրումների, զգայական հայեցողության ու պատկերացման համար: Թեև այս իմաստով խոսքը, օրինակ, նույնպես կարող է ուղղված լինել զգայական պատկերացմանը և ապրումներին, սակայն ի տարբերություն խոսքի՝ գեղարվեստական ստեղծագործությունը դիմում է ոչ միայն **զգայական ընկալմանը** որպես զգայական առարկա, դրա հետ մեկտեղ՝ նա դիմում է **ոգուն**: Ոգին պետք է ենթարկվի գործողությանը և նրա մեջ գտնի մի որևէ բավականություն: Գեղարվեստական ստեղծագործության այս կոչումից, գրում է Հեգելը, մեզ անմիջապես պարզ է դառնում, որ այն չպետք է բնության արդյունք լինի և իր բնական կեցության բերումով չպետք է օժտված լինի բնական կենսականությամբ՝ անկախ այն բանից, թե մենք բնության առարկաները վե՞ր, թե՞ վար կդասենք գեղարվեստական ստեղծագործությունից[29]:

Ընդ որում, ըստ Հեգելի, զգայական տարրը գեղարվեստական ստեղծագործության մեջ գոյության իրավունք ունի լոկ այնքանով, որքանով այն գոյություն ունի մարդկային հոգու համար, այլ ոչ թե ինքնին, որպես զգայական: Միաժամանակ, ըստ Հեգելի, ավելի մոտիկից քննության առնելիս այն հարցը, թե զգայական սկզբունքը ի՞նչ կերպ գոյություն ունի մարդու համար՝ մենք տեսնում ենք, որ այն կարող է ոգու նկատմամբ տարբեր հարաբերությունների մեջ գտնվել: Այս դիրքերից Հեգելը մերժում է գեղարվեստական ստեղծագործության միակողմանի, զուտ զգայական ընկալումը՝ այն համա-

[28] Տե՛ս նույն տեղում, էջ 185-186:
[29] Տե՛ս նույն տեղում, էջ 195:

ռելով ոգու և գեղարվեստական ստեղծագործության միջև հարաբերության ամենաանմիտ, ոգու համար ամենից քիչ հարմար եղանակը: Դա այն է, որ մենք միայն դիտում ենք գեղարվեստական ստեղծագործությունը, լսում, զգում ենք այն և այլն: Մինչդեռ իրականում ոգին չի բավարարվում արտաքին աշխարհի առարկաների լոկ տեսողական և լսողական ընկալմամբ, նա այդ առարկաները դարձնում է իր ներքին սեփականությունը[30]:

Գեղարվեստական մշակույթի զարգացման հիմքում, ըստ Հեգելի, ընկած է գեղեցիկի գաղափարը, որից ծնունդ են առնում ու ձևավորվում գեղեցիկի տարբեր դրսևորումները և գեղարվեստական իդեալն իր զարգացման մեջ: Սակայն իր իդեալիստական ելակետային սկզբունքին հավատարիմ՝ Հեգելն այստեղ մարդկության գեղարվեստական կյանքի իրական պրոցեսը ներկայացնում է որպես գեղեցիկի գաղափարի ինքնազարգացում:

Հեգելը խորազնին քննության է առնում «գեղարվեստական գեղեցիկը» և այն, թե նա ինչպես է ծավալվում իրականացած գեղեցիկի աշխարհում՝ զանազան արվեստներում և առանձին գեղարվեստական ստեղծագործություններում: Այդ աշխարհի բովանդակությունը հանդիսանում է գեղեցիկը, իսկ ճշմարիտ գեղեցիկը իր ձևը գտած հոգեկանությունն է, իդեալը, ավելի ճիշտ՝ բացարձակ ոգին, ինքը՝ ճշմարտությունը: Աստվածային այդ բնագավառը, որը գեղարվեստորեն մարմնավորված է հայեցողության և զգայության համար, կազմում է արվեստի ամբողջ աշխարհի՝ որպես ինքնուրույն, ազատ, աստվածային կերպարի կենտրոնակետը, կերպար, որը լիովին յուրացրել է ձևի և նյութի արտաքին կողմը և դրանք կրում է իր մեջ որպես իր սեփական դրսևորում[31]:

Նա արվեստի ներգործության ոլորտը, մասնավորապես գեղեցիկի զգացումը, կապում էր բացառապես մարդու զգացմունքային աշխարհի հետ՝ այն խստորեն սահմանազատելով բանականության ոլորտից: «Գեղեցիկն այն է,- այդ կապակցությամբ գրում է նա,- ինչ առանց հասկացության, այսինքն՝ առանց բանախոհության կատեգորիաների օգնության ներկայացվում է որպես համընդհանուր հիացմունքի առարկա»[32]:

Վերը շարադրվածի հիմքում ընկած է հեգելյան այն հայեցակարգային դրույթը, որ բացարձակ իդեային, որպես այդպիսին, ներհատուկ է ոչ թե գեղեցիկը, այլ՝ ճշմարիտը: Սակայն բացարձակ իդեան իր ծավալման ու ինքնադրսևորման ընթացքում մարդուն սկզբում երևում է հայեցողության ձևի տակ, ներկայանում է նրա զգացմունքային աշխարհին: Բացարձակ իդեայի ճանաչման հենց այդ փուլում է ձևավորվում գեղեցիկի պատկերացումը որպես տեսապատրանք: Հետզհետե՝ բացարձակ իդեայի ճշմարիտ էության բացահայտմանն ու ճանաչմանը զուգընթաց գեղեցիկի տեսապատրանքը ցրվում է՝ իր տեղը զիջելով ճշմարտությանը:

Սակայն չնայած ճշմարիտի ու գեղեցիկի հասկացությունների ժամանակային այս կտրուկ սահմանազատմանը, Հեգելը միաժամանակ ներքին նուրբ կապ էր տեսնում դրանց միջև, գտնելով, որ ճշմարտության, ինչպես որ

[30] Տե՛ս նույն տեղում:
[31] Տե՛ս նույն տեղում, էջ 259:
[32] Նույն տեղում, էջ 557:

բարու հասկացությունները չեն կարող լիակատար լինել առանց գեղեցկության:

Եզրակացություն

Հեգելը, մեր ժամանակների բառապաշարով արտահայտված՝ արվեստի ժողովրդայնության ջատագով էր՝ գտնելով, որ «Արվեստը գոյություն ունի ոչ թե փոքր, նեղ շրջանակի, ոչ թե փոքրաթիվ շատ կրթված մարդկանց, այլ ամբողջ ժողովրդի համար՝ ընդհանուր առմամբ»:

Արվեստի ստեղծագործություններում, ըստ Հեգելի, ժողովուրդները ներդրել են իրենց ամենաբովանդակալի ու ամենավսեմ ներքին մտահայեցողություններն ու պատկերացումները: Արվեստը հաճախ որպես աղբյուր, իսկ որոշ ժողովուրդների մոտ՝ որպես միակ աղբյուր է ծառայում՝ նրանց իմաստությունն ու կրոնը ճամաչելու համար: Հեգելը նման առաքելություն էր բաժին հանում արվեստին՝ կրոնի և փիլիսոփայության հետ համահավասար: Սակայն արվեստը, ըստ նրա, ունի նաև էական յուրահատկություն, և դա այն է, որ նա նույնիսկ ամենավսեմ առարկաները մարմնավորում է զգայական ձևով՝ դրանք ավելի մերձեցնելով այդ արտահայտման ձևերի էությանն ու բնույթին, զգայություններին և ապրումներին:

ГЕГЕЛЬ О РОЛИ ИСКУССТВА
(К 250-летию со дня рождения Гегеля)[33]

ГРИГОР АСАТРЯН

Гегель был приверженцем народности искусства. Он считал, что «Искусство существует не для небольшого замкнутого круга, не для немногочисленных очень образованных людей, а в целом для всего народа». Согласно Гегелю, в произведения искусства народы вкладывают свои самые содержательные внутренние созерцания и представления. Искусство часто служит ключом, а у некоторых народов – единственным ключом для понимания собственной мудрости и религии. Подобную миссию отводит Гегель искусству – наравне с религией и философией. Однако искусство, согласно Гегелю, обладает также немаловажной особенностью, и она заключается в том, что даже самые возвышенные истины оно воплощает в чувственной форме, еще более приближая их суть и природу к чувствованиям и переживаниям.

Ключевые слова – Гегель, искусство, художественный идеал, прекрасное в природе, прекрасное в искусстве, принцип подражания природе.

[33] Исследование проводилось специально для “Искусствоведческого журнала" в связи с исполняющимся 27 августа 2020 года 250-летием самого яркого представителя немецкой классической философии Георга Вильгельма Фридриха Гегеля.

HEGEL ON THE ROLE OF ART
(To the 250th anniversary of Hegel's birth)[34]

GRIGOR ASATRYAN

Hegel was an advocate of the national spirit in art. In his view, "Art does not exist for a not numerous, small and narrow circle of highly educated people, but for the nation as a whole". According to Hegel, peoples put their most meaningful inner contemplations and imaginations into works of art. Art often serves as a key, in some peoples – as the only key to understanding of own wisdom and religion. Such mission is imparted by Hegel to art – on a par with religion and philosophy. Meanwhile, according to Hegel, the distinctive feature of art is that it embodies in sensuous form even the most sublime truths, bringing their essence and nature still closer to sensations and emotional experiences.

Key words – Hegel, art, artistic ideal, the beautiful in nature, the beautiful in art, the principle of imitating nature.

[34] The study was carried out especially for the "Journal of Art Criticism" on the occasion of the 250th anniversary of birth of the most prominent representative of Classical German Philosophy Georg Wilhelm Friedrich Hegel.